այն քահանաներին, որոնք որ և իցէ գործում մինչև օրս յանցաւոր են ճանաչուած, եւ այդպիսիների անցեալը չը պէտք է ի նկատի ունենամ և ներում եմ նոցա. բացի նոցանից, որոնք արդէն բանադրուած կամ արգելուած են հոգևոր իշխանութիւնից: Դուք պէտք է ջնջէք ձեր սրտից չարութիւնը և համեստութեամբ գործէք ու ձեզ յանձնուած ժողովուրդը հովուէք, ինչպէս վայել է մի ճշմարիտ հոգևորականի՝ ի մխիթարութիւն իմ սրտի և յուրախութիւն Ազգի և եկեղեցւոյ »:

Ապա օրհնեց նոցա և արձակեց. և ամենքը համբուրելով Նորին Վեհափառութեան Աջը, հեռացան. քաղցր տպաւորութեան տակ:


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

ԸՆԴԱՐՁԱԿ

ՕՐԱՑՈՅՑ

**1886**

Սեփհականութիւն

ՍՈՒՐԲ ՓՐԿՉԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ

Տպագրութիւն Գ. Պաղտատլեան

(ԱՐԱՄԵԱՆ)

Գին 3 Ղրուշ

Պարունակութիւն

Օրացոյց և գուշակութիւնք օդոյ.=Տարեդարձ Ծննդոց և Գահակալութեանց Վեհապետաց. — Յանկ Օսմ. Սուլթանաց. — Աւագանի Կայսերական պալատան. — Նախարարք Բ. Դրան. — Մեծ պաշտօնատարք մայրաքաղաքին. — Հրամանատարք բանակաց. —

Կուսակալք Եւրոպական, Ասիական և Ափրիկեան նահանգաց. — Առանձնաշնորհեալ նահանգք. — Յատուկ կառավարեալ երկիրք. — Պատրիարքունք և Աղգապետք. — Օսմանեան դեսպանք. — Դեսպանք և Հիւպատոսք օտար Տէրութեանց ի Կ. Պոլիս. — Վիճակագրութիւն Թուրքիոյ. — Հայազգի աստիճանաւորք և պաշտօնեայք Օսմանեան պետութեան. — Հայրապետութիւն Հայոց. — Կեդրոնական Վարչութիւն Հայոց Թուրքիոյ. — Ազգային Ընդհ. ժողով. — Առաջնորդական վիճակք Պատրիարքութեան Կ. Պոլսոյ Վիճակք Երուսաղէմայ, Կիլիկիոյ, Աղթամարայ և այլն. — Մայրավանք. — Վանօրայք. — Վիճակագրութիւն Կ. Պոլսոյ թաղօրէից. — Բարեգործական և կրթական հաստատութիւնք. — Վիճակք և վանք ի Ռուսաստան, ի Պարսկաստան և ի Հնդկաստան. — Հայազգի աստիճանաւորք և պաշտօնեայք Ռուսական, Պարսկական և այլ և այլ Տէրութեանց. — Հռովմէական հայ հասարակութիւն — Դասատուք Պետական վարժարանաց. — Բժիշկ քաղաքական և Զինուորական. — Փաստաբանք Օսմանեան և օտար դատարանաց. — Արուեստագէտք. — Լրագիրք և պարբերական հրատարակութիւնք զանազան տեղեաց. — Պարզատոմար օրացոյց. — Վիճակագրական ցուցակք համայն պետութեանց. — Ծանուցմունք։

Կէտրոնատեղին է՝ Տպագրատան գրատունը, Յակոբեան խան, Կ. Պոլիս

ԾԱՆՕԹ. — Այս տարուան տպագրութիւնը որ 300 երեսներու հասած է՝ նախորդ տարիներէ աւելի ընդարձակ և վերջին վիճակագրական տեղեկութիւններով ճոխացեալ է, առանց գնոյ աւելման։

---

**Խոնարհաբար խնդրումենք Թեմական Ատեաններից և Հոգևոր Կառավարութիւններից իրանց ստորադասեալ հաստատութեանց և նոցա մէջ գործող պաշտօնէից ցանկը ուղարկել Խմբագրութեանս ց1ն Յունվարի տարւոյս։**

---

Շնորհակալութեամբ ստացանք Բերսիէ «Կեսար և Աստուած» (Փարող) գիրքը. Թարգմ. Ֆրանսերէնից Արգար Յովհաննիսեան Թիֆլիս. գինն է 20 կոպէկ։